# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## Թեմա՝ «Ուսումնական նյութի յուրացման արդյունավետության բարձրացումը ձևավորող գնահատման գործիքների միջոցով»

*Հեղինակ՝ Լիլիթ Մելքոնյան*

*Դպրոց՝ Մ. Գորկու անվան համար 5 ավագ դպրոց*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**.....
**2**

**ՆԱԽԱԲԱՆ**.....**3**

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ**

1.1 Գնահատման տեսակները, դրանց կիրառման հնարավորությունները: Ձևավորող գնահատում.....**5**

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ**

**2.1** «Մայրենի», «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դասերին ձևավորող գնահատման կիրառման դերը՝ ուսումնական նյութի արդյունավետ յուրացման
առումով.....**12**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**.....**17**

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**.....**18**

# ՆԱԽԱԲԱՆ

*«Սովորական ուսուցիչը պատմում է: Լավ ուսուցիչը բացատրում է: Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է»: ՈՒԻԼՅԱՄ ՈՒՈՐԴ*

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, կյանքի նոր ռիթմը իրենց հետ բերել են բազմաթիվ հրամայականներ, որոնք մեծ ազդեցություն են ունենում նաև կրթական համակարգի վրա. հանրակրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով արդիականացվում է: Արդի կրթական բարեփոխումները նախատեսում են ուսուցման մեթոդների վերանայում, ժամանակակից դասատիպերի ներդնում, որոնցից անմիջականորեն կախված է ուսուցման որակը: Կրթության բովանդակության, դասավանդման մեթոդների ու առհասարակ կրթական բարեփոխումների մի կարևոր բաղադրիչ է նաև սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման գործընթացը, որը նույնպես ամեն կերպ պետք է համապատասխանի կրթական բարեփոխումների տրամաբանությանը՝ սպասարկելով կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների շահերը: Ինչպես գիտենք, արդի հանրակրթական համակարգի առարկայական չափորոշիչները սահմանում են նոր կարողունակությունների համակարգ սովորողների համար: Կրթության հիմնական կազմակերպիչները՝ ուսուցիչները, անդադար փնտրում են դասի պլանավորման այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան սովորողների կրթական պահանջմունքներն արդյունավետորեն բավարարել դասապրոցեսի ընթացքում: Այստեղ կարևոր բաղադրիչ է նաև սովորողների գնահատումը, դրա նպատակային օգտագործումը ուսուցչի կողմից:

Գաղտնիք չէ, որ գնահատմանը դերը ուսուցման գործընթացում կարող է ունենալ մի շարք դրսևորումներ, այդ թվում՝ աչքի ընկնելով իր հակաբևեռ ազդեցությամբ: Այն կարող է նպաստել սովորողների ուսումնական մոտիվացիայի խթանմանն ու բարձրացմանը կամ ընդհակառակը՝ նվազեցնել այն և բացասական ներգործություն ունենալ: Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ նոր կրթական

չափորոշչի պահանջներով պայմանավորված՝ հարկ է միավորային գնահատումից զատ, ուշադրության արժանացնել նաև ձևավորող գնահատմանը, որը ուսուցիչին տալիս է ուսումնառության գործընթացը մշտադիտարկելու, դիտարկելու մի շարք արդյունավետ գործիքներ ու մեթոդական հնարներ:

Խոսելով կրթության արդիականացման մասին, որտեղ ավանդական դասատիպերին գալիս են փոխարինելու կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթության մոդելը, կարծում ենք, որ հարկ է ձևավորող կամ ուսուցանող գնահատման դերը առանցքային է:

**Հետազոտության նպատակն** է ուսումնասիրել «Մայրենի», «Հայոց լեզու», և «Հայ գրականություն» առարկաների դասերին ձևավորող գնահատման գործիքների կիրառման դերը՝ ուսումնական նյութի արդյունավետ յուրացումն ապահովելու նկատառումներից ելնելով:

**Հետազոտության խնդիրները:** Մեր հետազոտության շրջանակներում քննարկվող խնդիրները հետևյալն են.

- Ուսումնասիրել և ներկայացնել գնահատման գործընթացը, տեսակները, մեթոդները և ձևերը, սկզբունքներն ու գործառույթները դպրոցում:
- Ուսումնասիրել և բացահայտել գնահատման համակարգի հիմնախնդիրները, վերլուծել գնահատման տարբեր ձևերի ազդեցությունը սովորողների բարձր առաջադիմության վրա:
- Դիտարկել ձևավորող գնահատման կիրառման դերը ուսումնական նյութի արդյունավետ յուրացման առումով:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

## 1.1 Գնահատման տեսակները, դրանց կիրառման հնարավորությունները:Ձևավորող գնահատում

Կրթական համակարգում սովորողների գնահատման համար գոյություն ունեն գնահատման երկու փոխկապակցված ձևեր՝ ձևավորող (ուսուցանող) և միավորային (քանակական): «Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով: Քանակական (միավորային) գնահատման համար կիրառվում է 10 միավորային սանդղակ: 10 միավորային սանդղակում որևէ թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները, սկսվում 1 միավորից և չունի անբավարար սանդղակ: Ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը»[1]:

**Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող գործառույթ:**

**Ուսուցանող գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ:**

Խոսելով միավորային գնահատման համակարգի մասին՝ նշենք, որ այն տարիներ շարունակ գործարկվել է ՀՀ կրթական համակարգում՝ սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները ամրագրելու համար: «Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների

[1] «ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:

չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման, այն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով»[2]: Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամն ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

Նշենք, որ ուսումնական գործընթացում միավորային գնահատումը կարող է ունենալ զսպող դեր, որպեսզի ծույլ և անպատասխանատու սովորողները մտածեն իրենց ուսումնառության վերջնարդյունքի ու կիսամյակային գնահատականի մասին: Անշուշտ, բարձր միավոր ստանալը կարող է ունենալ հակառակ ազդեցությունը՝ մոտիվացնելով անբան ու անփույթ սովորողներին: Այս ամենը, սակայն, հարաբերական է և կախված է իրավիճակից:

Այնուամենայինիվ, խոսելով կրթության արդիականացման մասին, որտեղ ավանդական դասատիպերին գալիս են փոխարինելու կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթության մոդելը, հարկ է անդրադառնանք ձևավորող կամ ուսուցանող գնահատման տեսակներին: «Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության

[2] «ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:

յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից»[3]:

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով: Կարծում ենք, որ ավանդական կրթական մոտեցումները հիմնովին պետք է վերանայվեն, քանի որ նոր մեթոդական հնարներով հագեցած դասերն ունակ են աջակցող ու մասնակցային միջավայր ապահովել սովորողների համար: Հարկ է վերանայել նաև միավորային գնահատման մոդելը: «Ավանդական դասին շեշտը դրվում է միավորային գնահատման վրա, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին օգտագործվում են գնահատման տարբեր մոտեցումներ, շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա[4]:




Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում, դրանք են՝

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

[3] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:

[4] «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», ռեսուրսագրքույկ, Երևան, 2020:

- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում[5]:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ձևավորող գնահատման կարևորագույն բաղադրիչն է, որն իրենից ենթադրում է որոշակի գործողությանն ուղղված պատասխան, արձագանք:

Օրինակ՝ ուսուցիչն արձագանքում է սովորողի կատարած աշխատանքին մեկնաբանությունների կամ առաջարկությունների տեսքով: Ստացվում է, որ հետադարձ կապն ուսումնառության ժամանակ սովորողների և ուսուցչի կատարած որոշակի քայլերի փոխադարձ համարժեք արձագանքն է: Այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների գործողություններին՝ ուսուցչի և մյուս սովորողների անդրադարձի: Հետադարձ կապը նախատեսում է ուսուցչի կողմից սովորողի ոգևորում, քաջալերում, ստուգող, բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն ուսուցչին հասկանալ սովորողի ուժեղ ու թույլ կողմերը և արձանագրել իր մասնագիտական բացթողումներն ու սխալները: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից[6]:

Այսպիսով, հետադարձ կապը թույլ է տալիս ուսուցչին հստակ պատկերացում կազմել սովորողի նախընտրությունների, հետաքրքրությունների, ուժեղ և թույլ կողմերի մասին: Այս մշտադիտարկման գործընթացի արդյունքում ուսուցիչը հնարավորություն է ստանում արագ բացահայտել առկա խնդիրները, ուղղել սխալները, աշխատել բացթողումների շտկման վրա: Արդյունքում սովորողն ավելի վստահ է առաջ շարժվում, հասկանում է՝ ինչի վրա է հարկավոր ուշադրություն դարձնել, մեծանում է վերջինիս սովորելու, գիտելիքներով ու կարողունակություններով զինվելու մոտիվացիան:

---

[5] https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html «Ձևավորող գնահատում»:

[6] http://storage.library.opu.ua/online/periodic/kms_2011_5/085-088.pdf О.В. Олещук, «Эффективная обратная связь в обучении», стр.85.

Կրթության համակարգում ժամանակակից անձնակողմներոշիչ հարացույցի հաստատման ու գործարկման հրամայականով պայմանավորված՝ արդիական ու հրատապ է դարձել սովորողի անձի ինքնուրույնության աստիճանի բարձրացման ու ինքնակողմներոշվող դիրքորոշման ձևավորման հիմնախնդիրը: Ավելին, կրթական գիտությունների ժամանակակից հետազոտությունները բխում են սովորողի ինքնավերլուծության և ինքնագնահատման արդիական հիմնախնդրից: Վերլուծության և հատկապես ինքնավերլուծության գործընթացը թերի կհամարվի, եթե այն չամբողջանա կշռադատման կամ գնահատման գործընթացով, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունի ինքնագնահատումը: Այստեղից էլ բխում է սովորողների ինքնագնահատման մեթոդների ակտիվորեն կիրառման հարցը հենց դասավանդման գործընթացում: «Ինքնագնահատման մեթոդներից առանձնացվում են ռուբրիկավորումը կամ ցուցանիշավորումը, չափանիշային աղյուսակի կազմումը, ռեֆլեքսային կազմակերպումը, նախագծային ինքնագնահատումը, Խմբային աշխատանքի ինքնագնահատումը, հետադարձ կապի հարցարանների լրացումը[7]: Կառուցողական հետադարձ կապ ստեղծելու համար կարևոր է, որ սովորողը հասկանա, թե տվյալ պահին ինչպիսի գիտելիքների ու կարողունակությունների պաշար ունի: Այս արձանագրումները ուսուցչի հետ կատարելուց հետո սովորողը սկսում է փնտրել եղանակներ ու միջոցներ, որպեսզի տեսանելի դարձնի այդ շրջափուլի հաղթանակը: Այդ հաղթանակին մոտենալու համար կատարած աշխատանքն էլ ավելի է մոտիվացնում սովորողին: Հաջորդիվ համադրելով այս ամենը՝ ուսուցչի հետ համատեղ սկսվում է ճանապարհային քարտեզի նախագծում: Արդեն սովորողի համար տեսանելի են միջոցները, ճանապարհներն ու նպատակը, թե ուր է գնում, ինչպես է գնում, ինչի համար է գնում: Անշուշտ, հետադարձ կապի, ինքնագնահատման ու փոխադարձ գնահատման արդյունավետ ու նպատակային կիրառման հիմքում նախաձեռնող ու ակտիվ սովորողն է:

«Փոխադարձ գնահատումը նույնպես ձևավորող գնահատման գործիքներից է և կարող է իրականացվել հետևյալ տարբերակներով.

- **սովորողը՝ սովորողին**
- **խումբը՝ խմբին,**
- **սովորողը՝ խմբին,**
- **խումբը՝ սովորողին:**

[7] Ա. Ալեքսանյան, «Սովորողների ինքնավերլուծության և ինքնագնահատման մեթոդների կիրառման հիմնախնդիրը դասավանդման գործընթացում», Երևան, 2016, էջ 11-13:

Փոխադարձ գնահատման միջոցով սովորողները տեղեկանում են իրենց աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի, սխալների մասին, անհրաժեշտության դեպքում ստանում են լրացուցիչ առաջադրանքներ և հանձնարարություններ՝բացթողումները լրացնելու համար[8]»:

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական անկյունաքարերից են, ուստի նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»[9]: Կրթության պահանջների բնականոն իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ»[10]: Անշուշտ, ուսուցիչն է դասի ղեկավարը, նրա դերն առանցքային է սովորողների կրթության ու դաստիարակության հարցում, այնուամենայնիվ արդի կրթական համակարգում խրախուսվում է հատկապես աշակերտակենտրոն ուսուցման մոդելը, որտեղ սովորողը կարող է դուրս գալ լսողի պասիվ դերից՝ դառնալով դասի ընթացքի անմիջական ճարտարապետը, իսկ ուսուցիչն այս պարագայում ուղղորդողի, համակարգողի դերում է:

Ուսման մեջ հաջողության հասնելու համար, Յ. Ա. Կոմենսկու կարծիքով, անհրաժեշտ է երեխաներին գիտակցել տալ գիտելիքների կարևորությունն ու պրակտիկ օգտակարությունը: Այդ իսկ պատճառով նա նշում էր, որ ուսուցիչը աշակերտի համար կհեշտացնի յուրացումը, եթե ցույց տա, թե ամեն բան, ինչ որ սովորեցնում է նրան, ինչպիսի ամենօրյա օգուտ է բերում համակեցության մեջ[11]:

---

[8] https://lib.armedu.am/files/resource/files/2022-07-08/da1b33669ffa33987bf1e893f524173a.pdf Լ. Ալեքսանյան, «Ձևավորող գնահատման գործիքներ»:

[9] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 10:

[10] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 5:

[11] Վ. Խ Հարությունյան, «Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Երևան, 1970, էջ 245:

Այսպիսով, ուսուցչի անձնական օրինակի դրական ներգործության ուժը մեծանում է, երբ այն գործում է պարբերաբար և հետևողականորեն: Մանկավարժի դրական ներգործությունը մեծանում է նաև այն ժամանակ, երբ սովորողները համոզվում են, որ ուսուցչի բառերի և աշխատանքի միջև չկան անհամապատասխանություններ. ուսուցիչն իր բոլոր աշակերտների նկատմամբ վերաբերվում է հավասարապես բարյացակամորեն[12]:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ ուսուցչի դերն ու հեղինակությունն առանձնակի կարևոր է ուսումնադաստիարակչական գործընթացում: Մեծ մտածողների մանկավարժական մարդասիրական գաղափարները գալիս են վերահաստատելու մեր այն պնդումը, որ ուսուցչի հեղինակությունը, նրա կողմից սովորողին օբեկտիվ գնահատելը փոխպայմանավորված են, և ահռելի է ուսումնադաստիարակչական գործընթացում ուսուցչի մասնագիտական պատրաստվածության և անձնային որակների դերն ու նշանակությունը: Կարող ենք պնդել, որ ուսուցման աշակերտակենտրոն մոտեցումները, այդ թվում՝ ձևավորող գնահատումը մեծ ոգևորությամբ է ընդունվում սովորողների կողմից:

Ուսուցչի կողմից կիրառվող ձևավորող գնահատման գործիքները կարելի է համարել հաջողված, եթե նա ունենում է հետևյալ արդյունքները.

- Սովորողի մոտ ձևավորվել է հստակ պատկերացում իր և դասընկերների ուժեղ և թույլ կողմերի մասին:
- Սովորողը ստացած տեղեկատվությունը ընդունում է և ներքին համաձայնության գալիս դրա հետ՝ դրսևորելով ինքնանդրադարձ կատարելու հմտություն:
- Սովորողն ունի ցանկություն ուղղելու սեփական և դասընկերների սխալները, և նա արդեն կատարել է առաջին քայլերն իր գիտելիքների բարելավման ուղղությամբ:

21-րդ դարի արագ զարգացող հասարակության պահանջն է ունենալ այնպիսի քաղաքացի, ով կկարողանա ճկուն լուծումներ գտնել արագ փոփոխվող պայմաններում, կլինի նախաձեռնող, կունենան սեփական ակտիվ դիրքորոշում, ստեղծագործական ու քննադատողական մտածողություն, ինչպես նաև կկարողանա ինքնավերլուծություն կատարել և առաջ քաշել սեփական ինքնագնահատման ու ինքնակառավարման մեխանիզմներ: Այս տրամաբանության մեջ ակներև է, որ ձևավորող գնահատումը կարող է մեծապես օգնել ուսուցչին ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իր և սովորողների քայլերը:

[12] И. П.Подласый, «Педагогика», Москва, 2007, стр, 456.

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

## 2.1 «Մայրենի», «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դասերին ձևավորող գնահատման կիրառման դերը՝ ուսումնական նյութի արդյունավետ յուրացման առումով

Կրթության պահանջների բնականոն իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ»[13]:

Լեզվական և հաղորդակցական կարողություններն հույժ կարևոր են ցանկացած գործունեություն ծավալելու ընթացքում, ուստի կարևոր ենք համարում հայոց լեզվի և գրականության դասաժամերի ընթացքում պայմաններ ստեղծել, որպեսզի սովորողի դերը լինի ավելի ակտիվ, վերջինս դուրս գա պասիվ լսողի ավանդական իր դերից՝ հնարավորություն ունենալով կարծիք, դիրքորոշում, վերաբերմունք արտահայտելու: Այս ամենով պայմանավորված՝ օրախնդիր է, որ յուրաքանչյուր ուսուցանվող թեմա լինի համակողմանի ու խորը ուսումնասիրված, չկրի մեխանիկական վերարտադրման բնույթ, կապակցվի գործնական հմտությունների հետ: 7-12 դասարանների հայոց լեզվի ուսումնառության համար սահմանվել են հետևյալ հիմնական և ենթահասկացությունները՝

- Հաղորդակցում՝ բանավոր հաղորդակցում, գրավոր հաղորդակցում, ոչ խոսքային հաղորդակցում:

[13] «Հանրակրթության մասին» ՀՀ օրոնք, հոդված 27, կետ 5:

- Լեզվական համակարգ՝ հայերենի հնչյունական, բառակազմական, քերականական համակարգեր:
- Ստեղծարարություն՝ տեքստի փոփոխում և ստեղծում, նախագիծ Ինքնություն՝ վերաբերմունք և արժևորում[14]:

Որպես ձևավորող գնահատման բաղադրիչ՝ հետադարձ կապի իրականացումն անհրաժեշտություն է նաև լեզվի ու գրականության դասավանդման ժամանակ:

Օրինակ 12-րդ դասարանում Գուգեն Մահարի ուսումնական թեմայի ուսումնասիրության ժամանակ կարելի է կազմակերպել բովանդակային քննարկում: Նոր նյութի հաղորդման ժամանակ կարելի է լսել սովորողներին՝ ինչ գիտեն գրող, հասարակական գործիչ Մահարու մասին: Այսպես խմբային քննարկման ընթացքում սովորողներն իմի կբերեն իրենց գիտելիքները, ուսուցիչի համար էլ հստակ կլինի այն, թե ով որչափ է տեղեկացված: Ուսուցիչը կարող է տալ հուշող բնույթի հարցադրումներ: Բերենք օրինակ՝




Հարցերի օգնությանմբ ուսուցիչն ապահովեց հետադարձ կապ, նպաստեց, որ դասարանը լինի ակտիվ, բոլորը մասնակցեն խմբային քննարկմանն ու հնչեցնեն վերլուծական ու գնահատողական խոսք: Այս պարագայում կարելի է բացառել մեխանիկական վերարտադրումը, սովորողները համպատրաստից են քննարկում, կարծիքներ հնչեցնում: Կարելի է խնդիրների շուրջ մեկնաբանություններ անել նաև գրավոր եղանակով:

Բերենք օրինակ 9-րդ դասարանի ծրագրային նյութից: Սովորողները համակողմանիորեն ուսումնասիրում են «Սասունցի Դավիթ» էպոսը: Որպեսզի ուսուցիչը համակարգի նախորդ դասարաններում սովորողների գիտելիքներն ուսուցանվող թեմայի շուրջ և ապա նոր միայն խորացնի թեմայի ուսուցման ծավալը,

[14] https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf «Հայոց լեզու» ծրագիր հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարանների համար:

կարող է կիրառել «Մտքերի քարտեզագրում» հնարը՝ խմբային եղանակով: Ուսուցիչը սովորողներին առաջարկում է ստեղծել մտքերի քարտեզ՝ գրառելով այն ամենն, ինչ գիտեին և ինչ ձեռք բերեցին հետազոտության ընթացքում: Դրանք կարող են լինել նաև բանալի բառեր, թվականներ, եզրաբառեր, հատուկ անուններ ու տեղանուններ: Բոլոր խմբերը հերթով ներկայացնում իրենց մտքերի քարտեզը, խմբային եղանակով ամփոփում:

Արդյունավետ հետադարձ կապ ապահովելու մի հետաքրքիր մեթոդ էլ մտագրոհն է: Դասի ավարտին սովորողները մտագրոհի միջոցով համապատասխան գրառումներով կպչուն թղթերը փակցնում են գրատախտակին:




Այս կերպ սովորողները կխմբավորեն իրենց իմացածը էպոսի ժանրային առանձնահատկությունների, հերոսների, նրանց դերերի ու մոտիվացիայի մասին: Կլինեն տարբեր կարծիքներ. սովորողները կսովորեն՝ միմյանց սովորեցնելով: Դիտարկենք մեկ այլ օրինակ՝ վերաբերող 8-րդ դասարանում գրականության դասին: Ուսումնական նյութը Մուրացանի «Հասարակաց որդեգիր» պատմվածքն է: Ուսուցիչը դասի ամփոփման փուլում ցանկանում է հասկանալ, թե որքանով են սովորողները յուրացրել թեման, ընկալել գաղափարը, ինչպիսի դիրքորոշում ունեն կերպարների վերաբերյալ, ուստի կիրառվում է հարցադրումների մեթոդը, ինչը թույլ կտա արդյունավետ հետադարձ կապ ապահովել, և սովորողներին տալ ինքնանդրադարձի հնարավորություն:

**Հարցադրումների օրինակներ՝**

1.Ո՞վ է Գևորգը:
2. Ի՞նչ երազանքներ ուներ Գևորգը:
3.Ի՞նչ դեր կատարեցին մեծահարուստները Գևորգի կյանքում:
4. Ինչու Գևորգը այլևս չվերադարձավ Գուստավի արհեստանոց:
5.Ի՞նչ կփոխվեր Գևորգի կյանքում, եթե մեծահարուստները կատարեին իրենց խոստումը:
6. Ի՞նչ կփոխվեր Գևորգի կյանքում, եթե մեծահարուստները չհանդիպեին նրան:
7. Ի՞նչ խորհուրդ կտայիք Գևորգին, եթե հանդիպեիք նրան:

Մայրենիի դասավանդման ընթացքում 6-րդ դասարանում ուսուցիչը կարող է հանձնարարել նմանօրինակ աշխատանք՝

**Կատարել տրված բարդածանցավոր բառերի բառակազմական վերլուծություն, հիմնավորել սահմանումով** ***/մայրաքաղաքային, կարգապահություն, հնչյունաբանություն, մայրաքաղաքային/:***

**Սահմանում**

**Բարդածանցավոր են մեկից ավելի արմատներից և առնվազն մեկ ածանցից կազմված բառերը:**

Սովորողները աշխատանքը կկատարեն զննական մեթոդի օգնությամբ: Ա4 ֆորմատի թղթի վրա կգրեն սահմանումը, բառերը կբաժանեն բաղադրիչների, կառանձնացնեն արմատները, ածանցը, հոդակապը, կգտնեն արմատների անհնչյունափոխ ձևերը, ցույց կտան համապատասխան հնչյունափոխությունը:

Դիտարկենք մեկ այլ առաջադրանքի օրինակ, որը թույլ կտա սովորողներին ինքնանդրադարձ կատարել:

**Ի՞նչ սկզբունքով են կազմված հետևյալ բառերը՝**
Արևածաղիկ, դեղատուփ, ջրաչափ, սարատեղ:

**Ի՞նչ սկզբունքով են կազմված հետևյալ բառերը՝**
Գետեզր, սրճեփ, շքերթ, լրտես:

Նմանօրինակ աշխատանքների իրականացումը ոգևորում է սովորողներին, բերում նրանց ակտիվ դաշտ, բարձրացնում մոտիվացիան ու

աշխատունակությունը: Այստեղ կարելի է իրականացնել ինքնագնահատման կամ փոխադարձ գնահատման ձևեր: Ձևավորող գնահատման բավականին լավ գործիք է նաև ինքնագնահատման ռուբրիկը:

| ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ | Գրեթե միշտ | Հաճախ | Հազվադեպ |
|---|---|---|---|
| Մասնակցել եմ քննարկումներին: | | | |
| Ձգալի աշխատանք եմ կատարել: | | | |
| Դժվարություններ եմ ունեցել: | | | |

Ինքնագնահատման արդյունքների վերլուծության արդյունքում ուսուցիչը կարող է պատկերացում կազմել յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումների, դժվարությունների և անհատական կարիքների մասին: Սովորող-սովորող հետադարձ կապի մոդելի ապահովման մեկ այլ եղանակ է հետազոտական աշխատանքների կամ մասնագիտական զեկույցների պատրաստում է: Կարելի է ընտրել, օրինակ՝ «Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի քերականական կարգերը» թեման: Այս աշխատանքը կարելի է կատարել գիտելիքների համակարգման և ամփոփման ժամանակ: Նմանօրինակ աշակերտակենտրոն մոտեցումները, որտեղ սովորողն ինքնուրույն է համակարգում իր գիտելիքը, դատողություններ կատարում մոտիվացնում են վերջիններիս, դնում նրանց ակտիվ գործունեության մեջ: Չի տրվում պատրաստի գիտելիք, չի խրախուսվում մեխանիկական վերարտադրությունը, սվորողն ինքն է դառնում հետազոտող, նախագծող, համակարգող, գնահատող: Աշխատանքի ավարտին սովորողները կարող են լրացնել կարճ պատասխաններով ինքնագնահատման ռուբրիկ: Սա լավ հնարավորություն է հետադարձ կապի և ինքնանրադարձի համար:

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Կարողանում եմ տարբերել նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերը: | ԱՅՈ | ՈՉ |
| 2. | Գիտեմ դրանցից յուրաքանչյուրի քերականական հատկանիշները: | | |
| 3. | Տարբերում եմ թեքվող, չթեքվող և մասամբ թեքվող խոսքի մասերը: | | |
| 4. | Կարողանում եմ նյութական իմաստ արտահայտող խոսքի մասը դուրս գրել տեքստից և կատարել ձևաբանական վերլուծություն | | |
| 5. | Աշխատանքն ինձ հետաքրքրեց | | |

Կարող ենք պնդել, որ ուսուցման աշակերտակենտրոն մոտեցումները, այդ թվում՝ ձևավորող գնահատումը մեծ ոգևորությամբ է ընդունվում սովորողների կողմից, իսկ ահա ուսուցչի կողմից ստեղծվող հետադարձ կապը կարելի է համարել հաջողված, եթե այն ունենում է հետևյալ արդյունքները.

- Սովորողի մոտ ձևավորվել է հստակ պատկերացում իր ուժեղ կողմերի և նրանց զարգացման հնարավոր ուղիների մասին;
- Սովորողը ստացած տեղեկատվությունը ընդունում է և ներքին համաձայնության գալիս դրա հետ;
- Սովորողն ունի ցանկություն ուղղելու սեփական սխալները, և նա արդեն կատարել է առաջին քայլերն իր գիտելիքների բարելավման ուղղությամբ:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով ուսումնական գործընթացի արդիականացմանն ուղղված մի շարք հիմնահարցեր՝ այդ թվում գնահատման ձևերն ու եղանակները հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում՝ կատարեմք մի քանի արձանագրումներ.

- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի նորարար լինելու հանգամանքից: Վերջինս պետք է դիմի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներին, այդ թվում՝ գնահատման ժամանակակից ձևերին ու գործիքներին:
- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման ներառի սովորողների առանցքային կարողունակությունների ձևավորումն ու զարգացումը:
- Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գործընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք, իսկ դրա կիրառման հիմնական նպատակը պետք է լինի սովորողի առաջադիմության ապահովումը;
- Սովորողի համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար:
- Գնահատումը չպետք է դառնա զսպող գործիք, այն պետք է ունենա այլ դերակատարում՝ բարձրացնել սովորողի մոտիվացիան, խթանել ուսոցման որակի բարձրացմանը:

Լիահույս ենք,որ սույն հետազոտությունը մեծապես կօգնի մեզ մանկավարժական պրակտիկայում և կդառնա մեր մանկավարժական գործունեության համար ուղենիշ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf «Հայոց լեզու» ծրագիր հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարանների համար:
4. «Հայ մանկավարժներ»,Ի Հատոր,Երևան, 1958:
5. Ա. Ալեքսանյան, «Սովորողների ինքնավերլուծության և ինքնագնահատման մեթոդների կիրառման հիմնախնդիրը դասավանդման գործընթացում», Երևան, 2016:
6. Վ. Խ Հարությունյան, «Յան Ամոս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Երևան, 1970:
7. «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», ռեսուրսգրքույկ, Երևան, 2020
8. https://kznakgnahatum.blogspot.cm/p/blog-page.html «Ձևավորող գնահատում»:
9. https://lib.armedu.am/files/resource/files/2022-07-08/da1b33669ffa33987bf1e893f524173a.pdf L. Ալեքսանյան, «Ձևավորող գնահատման գործիքներ»:
10. И. П.Подласый, «Педагогика», Москва, 2007.
11. http://storage.library.opu.ua/online/periodic/kms_2011_5/085-088.pdf O.B. Олещук, «Эффективная обратная связь в обучении», стр.85.